Բ. Որչափ կարելի է անոնց մարմնոյն կազմուածքը զօրացընեն զով տեղուանք տանելով, կամ շարժմունք ընել տալով։

Գ. Երբոր տղաք քիչ ախորժ ունենան կերակուր ուտելու, քիչ կերակուր տրուի իրենց։

Դ. Երբոր տղաք չոր հազ մը ունենան, և ՃՃիի նշաններ ցուցընեն, մէկ երկու պղտի դրգալ ձէթ խմցընելու է շաքարով խառնած. անով մէկէն կը փարատի։

Ե. Երբոր յայտնի կ'իմացուի թէ տղան ՃՃի ունի, ալ անկէ ետքը պէտք չէ մարդ ինքիր գլխուն դեղեր ընէ. հապա բժիշկ կանչելու է։

Ամ զգուշութիւններով մեծ հիւանդութեանց առջևը կ'առնուի, և թեթև հիւանդութիւնները կ'անցնին։

ԲՆԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆ

ԲՆԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ

Նայա կամ Էնոցաուոր օձ։

ՆԱՆԱՊԱՐՀՈՐԴՔ այս օձին ակնոցաւոր ըսին՝ վզին վրայ ակնոցի ձևով գծուածք մը ունենալուն համար. ու Քորոմանտէլի երկրին մէջ կը գտնուի, և իր գլխաւոր յատկութիւններովը ուրիշ օձերէն տարբեր ցեղ կը սեպուի, վասն զի վերի ծնօտին ոսկորներուն վրայ սրածայր թիւնալից ակռաներ ունի, որոնք հանդարտ կեցած ատենը՝ կրկնածալ ընտերքին մէջ կ'առնէ կը ծածկէ. ծնօտը սաստիկ տեղիք կուտայ ու կը լայնայ, լեզուն խիստ կ'երկրննայ, գլխուն ետևի կողմը լայն է ու թիթեղի պէս հաստ ու պինտ թեփով ծածկած. պոչն ալ կլոր է ու վրան նոյնպէս երկու կարգ հաստ թեփ կայ. ակռաները կարճ,

1 Լատ. Naja tripudians. Գղ. Serpent à lunette. Անգղ. Spectacle snaike. Իսկ Հնդկաստանցի Փորթուգէզները Cobra de capello կ'ըսեն և տեղացի Հնդիկները նակ և էնրնանոյ։

սուր և քիչ մը ծռած են, և խայթող ակռաներուն կէսին չափ հաղիւ կան. աչունները մանր ու քիչ մը դուրս ցըցուած են, վարի ծնօտը՝ վերինէն պըզտիկ է, ու թունչը կլոր. երկայնութիւնը գրեթէ 6, 7 ոտնաչափ է, իսկ մէջքին բոլորտիքը չորս բթաչափ. բովանդակ մարմինը հաւկըթաձև մանր թեփով ծածկուած է, և ընդհանրապէս փորուն տակը ճերմակ, իսկ վրան դեղնագոյն կամ մոխրագոյն է՝ տեղ տեղ երկնագոյն բծերով։ Կնոջաւոր օձին մէկ զարմանալի յատկութիւնն ալ այս է որ, կիրք եղած ժամանակը վզին մորթը կ'ուռի և գլուխը անոր մէջ կը մտնէ կ'ելլէ. աս ուռած մորթին վրայ է ակնոցի ձևով գծուածքը, որուն չորս դին լայն ու սև մանեակ մըն ալ կայ։ Այսպէս օձը երբոր հեռուէն թշնամի տեսնէ, մէկէն կը շտկուի, կ'երկրնայ ու կրակոտ աչունները միակերպ ասդիս անդին կը դարձընէ, վիզը կ'ուռեցընէ, բերանը կը բանայ և պոչը տատանելով կը սկսի թշնամւոյն վրայ երթալ։ Այս օձէն խայթուողներէն խիստ քիչը մահուանէ կը խալըսին. շատ փորձերով հաստատուած է՝ որ ասոր խածուածքովը շները քսան կամ քսանը հինգ վայրկենի մէջ կը մեռնին, և վառեակները մէկ ու կէս վայրկենի մէջ. և երբոր կը թունաւորուին՝ կը սկսին խեղճ ձայներ հանել, չէն կրնար ոտքի վրայ կենալ ու շունչ առնել. վրանին դող կուգայ, կը փրփրան, անդամնին իրար կ'անցնի, ետքը վրանին թմրութիւն մը կուգայ ու քիչ ատենէն կը մեռնին։

Դէպէտ և այսչափ վտանգաւոր է աս օձին մօտենալը, բայց Հնդկաստան թովիչներ կան՝ որ զասոնք կ'ընտանեցընեն ու կը պարծենան թէ իրենց նուագարանով ան օձերը զսպելու զօրութիւն ունին, նաև անոնց խածուածքին դէմ զանազան սուտ դեղեր կը ծախեն. երբեմն ալ կամաք թող կուտան օձին որ զիրենք խածնէ. բայց առաջուց անոր բոլոր թունաւոր ակռաները հանած է։ Այս մարդիկները ամէն օր հրապարակներու մէջ գետնի վրայ կրծկրտած, ձախ ձեռուընին եղէգէ սրինգ մը բռնած՝ կը բանան իրենց կողմերը՝ որոնց մէջէն օձերը ինքնիրենց դուրս կ'ելլեն. և քանի որ սրնգին ձայնը կ'առնեն կամաց կամաց կը տնկուին, կը նետուին, աչունին իրենց տիրոջը վրայ տնկած կը նային, և եղանակին աստիճանին համեմատ՝ իրենք ալ կաքաւելու պէս՝ կը շարժին, և տէրերնին ալ ձեռքով ինչ շարժմունք որ կ'ընէ՝ անոր կը հետևին։ Էկը կը պատմէ թէ երբոր տան կամ պարտէզի մը մէջ աս տեսակ օձ մը մտնալով զամէնքը անհանգիստ ընէ, տանուտէրը թովչի մը կ'երթայ, որպէս զի զիրենք խալըսէ ան վախէն. թովիչը կուգայ ու իր արուեստովը այնչափ կ'ընէ՝ որ օձը կուգայ ոտքին քով կը սկսի սողալ. ան ատեն ձեռքով կը բռնէ կը վերցընէ օձը առանց վտանգի, և ամենայն կերպով կը զգուշանայ զանիկայ սպաննելէն, վասն զի Հնդկաստանցւոց մէջ սրբազան կենդանի սեպուած է։ Իսկ Պալապարի մէջ նաև կը պաշտեն զասիկայ. և տաճարներու մէջ դրած՝ իրեն ընծաներ կը բերեն, և առջևը աղօթք կ'ընեն։ Պրահմանները, որ Հնդկաստանցւոց քուրմերն են, այս օձին անուամբը երդմնեցուցչութիւն կ'ընեն. և պաշտօնատեր մարդիկներ անոր կաթ կամ ուրիշ ուտելիքներ կը տանին անտառներն ու դաշտերը, ուր որ շատ կը գտնուի։

Դիոգինէսի հարցեալ թէ ո՞ր 'ի գազանաց չարաչար խածանէ, ասէ. Ի վայրենեաց՝ օձ և ինձ. և յընտանեաց՝ շոգմոգ և զրպարտող։

ՈՍԿԻՓՈՐԻԿ